



Կարճ գրություն 14

Հունվար 2011

Պետական գնումներ

Սոցիալական հայեցակետերը գնումների ոլորտ ներմուծելը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Որո՞նք են սոցիալական հայեցակետերը:
- Ի՞նչ է նախատեսում Հրահանգը սոցիալական հայեցակետերի առումով:
- Ինչպե՞ս կարող են սոցիալական հայեցակետերը ներմուծվել գնումների գործընթացի մեջ:
- Նախապատրաստում
- Հայտարարում
- Ընտրություն
- Հայտերի գնահատումը
- Պայմանագրի պայմանները
- Պայմանագրի իրականացման նկատմամբ հսկողությունը

Որո՞նք են սոցիալական հայեցակետերը:

Գոյություն չունի ամրագրված սահմանում, թե ինչ է նշանակում սոցիալական հայեցակետ: Հասկացությունն ավելի հեշտ ընկալվում է օրինակների միջոցով:

Սոցիալական հայեցակետերի օրինակներ.

- Գործազրկության նվազեցում
- Անչափահասների աշխատանքի օգտագործման կանխում
- Ռասայի, կրոնի, հաշմանդամության, սեռի կամ սեռական կողմնորոշման հիմքի վրա խտրականության կանխարգելում
- Աշխատուժի վարձման բարեխիղճ գործունեության խրախուսում
- Տեղական գործազրկության նվազեցում
- Սոցիալական մեկուսացման նվազեցում
- Երիտասարդների և հաշմանդամների համար վերապատրաստման հնարավորությունների օժանդակում
- Հաշմանդամների համար աշխատաշուկայի հասանելիության խրախուսում

Պետական պատվիրատուն հաճախ օգտագործում է պետական գնումները՝ նմատատիպ քաղաքականության նպատակներին օժանդակելու համար: Եղանակներից մի քանիսը, որոնցով պետական պատվիրատուն փորձում է օգտագործել սոցիալական հայեցակետերը գնումների գործընթացների մեջ (ներառյալ՝ վերոնշյալ մի քանի օրինակները) իրավաբանական առումով թույլատրված չեն ԵՄ իրավական համակարգում: Մյուսները թույլատրված են՝ պայմանով, որ որոշ պայմաններ պետք է բավարարվեն: Մի քանիսը հատուկ թույլատրված են Հրահանգով:

Գնումների տեսանկյունից հիմնական հարցերն են.

(1) Թույլատրվա՞ծ է արդյոք սոցիալական հայեցակետերի օգտագործումը գնումների գործընթացի մեջ ԵՄ իրավական համակարգում, և

(2) Եթե դա իրավաբանորեն թույլատրված է, ե՞րբ և ինչպե՞ս կարելի է դա անել:

Պատասխանները հեշտ չեն և երբեմն հակասություն է առաջանում ընդհանուր քաղաքականության և ԵՄ իրավական համակարգի ներքո հասանելի միջոցների միջև: Երբ քննարկվում է սոցիալական հայեցակետերի օգտագործումը, միշտ անհրաժեշտ է հաշվի առնել, թե արդյոք առաջարկված մոտեցումը

համապատասխանում է Պայմանագրի հիմնարար սկզբունքներին: Սա կիրառվում է նույնիսկ այն դեպքում, երբ Հրահանգում կան այս հայեցակետերի օգտագործումը թույլատրող հատուկ դրույթներ: Հրահանգը, ինչպես նաև նախադեպային իրավունքը և ուղղորդումները պարզ են դարձնում սա:

Տեղական նախապատվությունները, գնի նախապատվությունը և առաջարկը ետ կանչելու վերաբերյալ դրույթները թույլատրված չեն ԵՄ իրավական համակարգում

Շատ երկրներում գնումներն ավանդաբար եղել են ազգային արտադրության զարգացման քաղաքականության կարևորագույն տարր: Գնումներն անցյալում օգտագործվել են, օրինակ, օժանդակելու գործարարությանը գործազրկության բարձր մակարդակ ունեցող տարածքներում, որոշակի ոլորտում գործարարության խթանմանը, օժանդակելու “գնիր ազգայինը” քաղաքականությանը և տնտեսվարող սուբյեկտներին օգնելու համար, որոնք այլ դեպքում շատ ջանք կթափեին գնումների գործընթացում հաջողության հասնելու համար:

Կիրառված միջոցների մի քանի օրինակներ նշված են վերևում՝ նկարագրական նպատակներով, բայց պետք է նկատի ունենալ, որ նմանատիպ միջոցները թույլատրված չեն Եմ իրավական համակարգում: Որոշվել է, որ դրանք խախտում են ԵՄ Պայմանագրի դրույթները և գնումների վերաբերյալ օրենքները:

Ազգային արտադրության ոլորտի քաղաքականությանը օժանդակող գնումների մեթոդները տարբեր են, բայց հիմնականում դրանք լինում են հետևյալ տեսքով.

- Անվավեր ճանաչելը. երբ պայմանագրերի որոշ տեսակներ կամ որոշակի քանակի պայմանագրեր անվավեր են ճանաչվում, և միայն տնտեսվարող սուբյեկտների որոշակի խումբ կարող է մասնակցել մրցույթին: Այդ խմբերը կարող են կազմված լինել, օրինակ, միայն փոքր և միջին ձեռնարկություններից, որոշակի շրջանում հիմնված տնտեսվարող սուբյեկտներից, կամ հատուկ փորձառություն կամ կառուցվածք ունեցող տնտեսվարող սուբյեկտներից, ինչպիսիք են, օրինակ, աշխատողների կամ արվեստագետների միությունները:
- Տարածքային կամ ազգային գնի նախապատվություն (տեղական արտադրանքին նախապատվություն տալու սխեմաներ). Երբ ֆինանսական առավելությունը տրվում է որոշակի տեսակի կապալառուի կամ նշված տարածքում կամ երկրում արտադրված ապրանքին: Հիմնական օրինակը տոկոսային առումով տրված գնային

նախապատվությունն է, որը տրվում է այն վայրում գործող մասնակցին, որտեղ և գործում է պետական պավիլիոնում: Երբ հայտերը գնահատվում են, այդ տարածքում գործող մասնակցի կողմից տրված գինը նվազեցվում է տաս տոկոսով: Նմանատիպ մոտեցում երբեմն կիրառվում է արտադրանքի համար ներկայացված հայտերի գնահատման նկատմամբ, երբ գնային առավելությունը տրվում է այն երկրում արտադրված ապրանքներին, որտեղ գտնվում է պետական պատվիլիոնում:

- Առաջարկների ետ կանչում. երբ իրականացվել է մրցակցային գործընթաց, բայց հայտերը ստանալուց հետո, այն խմբից, որին նախապատվություն է տրվել, պայմանագիրը շնորհվել է լավագույն կատարողական արդյունքը ցույց տվող մասնակցին, եթե նա ներկայացրել է համեմատաբար լավագույն հայտը:

Նմանատիպ միջոցները ուղղակի խտրական վերաբերմունք են ստեղծում և խախտում են ԵՄ Պայմանագիրը: ԵՄ Անդամ երկրներին թույլատրված չէ օգտագործել նմանատիպ միջոցների:

Ի՞նչ է նախատեսում Հրահանգը սոցիալական հայեցակետերի առումով:

Հրահանգը պարունակում է մի քանի կարևոր դրույթներ, որոնք հաստուկ վերաբերում են սոցիալական հայեցակետերի օգտագործմանը գնումների գործընթացի մեջ:

- **Հաշմանդամների համար աշխատավայրերի կամ ֆիզիկական արատ ունեցող անձանց համար աշխատանքային ծրագրերի համար պայմանագրեր.** ԵՄ անդամ երկրներին թույլատրված է ունենալ “պահեստային պայմանագրեր”: Սրանք այն պայմանագրերն են, որոնք պետք է իրականացվեն հաշմանդամների համար նախատեսված կազմակերպությունների և հաշմանդամների աշխատանքային ծրագրերի կողմից, որտեղ աշխատողների մեծ մասը ֆիզիկական արատ ունեցող անձիք են, որոնք, իրենց հաշմանդամության բնույթի կամ լրջության պատճառով չեն կարող գործունեություն ծավալել բնականոն պայմաններում:

Պետական պատվիլիոնում պարտավոր է Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում հայտարարություն տալ՝ հրապարակելով պայմանագրի հայտարարությունը, և հետևել սովորական մրցակցային գործընթացին, սակայն այն կարող է մասնակցության հնարավորություն ընձեռել հաշմանդամների աշխատավայրերի և հաշմանդամների համար աշխատանքային ծրագրերին:

- **Տեխնիկական մասնագրեր - հաշմանդամների համար հասանելիության չափորոշիչները.** պետական պատվիլիոնում տեխնիկական մասնագրերը սահմանելիս հնարավորության դեպքում պետք է դրանցում նախատեսի հաշմանդամների համար հասանելիության չափորոշիչներ կամ այնպիսի չափանիշներ, որոնք հասանելի կլինեն բոլորի համար:

- **Պայմանագրի իրականացման պայմաններ.** Պետական պատվիրատուն կարող է սահմանել հատուկ սոցիալական պայմաններ, որոնք կապված են պայմանագրի իրականացման հետ, պայմանով, որ
 - հատուկ պայմանները համապատասխանում են ԵՄ իրավական համակարգին, և
 - դրանք նշված են պայմանագրի հայտարարության կամ մասնագրերի մեջ, և
 մասնակիցները, որոնք ընդունում են պայմանները չեն կարող բացառվել միայն այն պատճառով, որ պետական պատվիրատուն կարծում է, որ մասնակիցը չի բավարարի այդ պայմանները:
- **Սոցիալական հատկանիշները որպես շնորհման չափորոշիչ.** Հրահանգը սահմանում է չափորոշիչների ոչ ամբողջական ցուցակը, որոնց վրա պետական պատվիրատուն կարող է հիմնվել, երբ պայմանագիրը շնորհում է տնտեսապես ամենաշահավետ հայտին: Այս ցուցակը չի նշում սոցիալական հատկանիշները՝ որպես շնորհման չափորոշիչ, բայց պարզ է, որ դրանք կարող են օգտագործվել՝ պայմանով, որ պետք է կապված են պայմանագրի առարկայի հետ և պետական պատվիրատուին չեն տալիս ընտրության անսահմանափակ ազատություն:

Ինչպե՞ս կարող են սոցիալական հայեցակետերն օգտագործվել գնումների գործընթացի մեջ:

Նախապատրաստում

Շատ քիչ դրույթներ կան Հրահանգում, որոնք վերաբերում են մինչև հայտարարությունն ընկած փուլին: Հրահանգը կենտրոնանում է գնումների մրցակցային գործընթացի իրականացման վրա:

Գործնականում, նախապատրաստական փուլն էական հնարավորություններ է տալիս սոցիալական հայեցակետերի օգտագործման համար, որոնք ազդում են գնումների ողջ գործընթացի վրա: Մա պայմանավորված է նրանով, որ հենց նախապատրաստական փուլում է, որ

- ընդունվում են գնումների գլխավոր ռազմավարական որոշումները
- սահմանվում է պայմանագրի առարկան
- կազմվում է պայմանագրի հայտարարությունը
- պատրաստվում են ընդհանուր և տեխնիկական մասնագրերը-Հրահանգը պահանջում է, հնարավորության դեպքում, տեխնիկական մասնագրերը սահմանել այնպես, որի հաշվի առնվեն հաշմանդամների համար հասանելիության չափորոշիչները կամ այնպես նախագծվեն, որ դրանք հասանելի լինեն բոլորի համար:
- սահմանվում են պայմանագրի պայմանները

Այս տարրերն ուղղակի կապ ունեն գործընթացի հետագա փուլերի հետ և այդ պատճառով մինչև գնումների գործընթացի սկիզբն ընդունված որոշումները կարող

են ունենալ էական ազդեցություն: Օրինակ, եթե տեխնիկական մասնագրերը պատրաստված են՝ հաշվի առնելով համապատասխան սոցիալական չափորոշիչները, ապա դրանք հետագայում կարող են կազմել հայտերի գնահատման չափորոշիչների մաս և հետևաբար, ազդեցություն ունենալ շնորհման վերջնական որոշման վրա:

Հայտարարում-պայմանագրի հայտարարություն

Պետական պատվիրատուի համար կարևոր է նախապես որոշել, թե արդյոք պետք է սոցիալական հայեցակետերը օգտագործել գնումների գործընթացի մեջ և ինչպես պետք է դա անել: Որոշ դեպքերում, եթե պետական պատվիրատուն ցանկանում է օգտագործել նման հայեցակետերը, նա պետք է դրանք նախապես ներառի պայմանագրի հայտարարության մեջ: Եթե նա այդպես չի վարվում, նա չի կարող օգտագործել այս հայեցակետերը հետագա փուլերում: Օրինակ.

- Եթե պայմանագիրը վերապահված է հաշմանդամների աշխատավայրերի կամ հաշմանդամների աշխատանքային ծրագրերի համար, դա պետք է հստակորեն նշվի պայմանագրի հայտարարության մեջ:
- Պայմանագրի հնարավորությունը պետք է հստակ և ճշգրտորեն նկարագրվի, եթե օրինակ, պետական պատվիրատուն պահանջում է թունելներով ճանապարհ, այլ ոչ թե ճանապարհ, որն անջատված է սարալանջերից, սա պետք է ներառնվի պայմանագրի նկարագրման մեջ, որպեսզի մասնակիցները հասկանան պահանջը:
- Եթե պետական պատվիրատուն պահանջում է տարբերակներ, որոնք կարող են վերաբերել էկոլոգիապես անվնաս այլընտրանքներին, սա պետք է նախատեսվի պայմանագրի հայտարարության մեջ:
- Նվազագույն մասնագրերը, որոնց պետք է բավարարեն մասնակիցները, պետք է հստակորեն նշվեն պայմանագրի հայտարարության կամ մասնագրերի մեջ:
- Պայմանագրի հատուկ պայմանները պետք է նշվեն պայմանագրի հայտարարության կամ մասնագրերի մեջ:
- Եթե պետական պատվիրատուն օգտագործում է թույլատրված սոցիալական հայեցակետերը որպես պայմանագրի շնորհման չափորոշիչ, ապա դրանք պետք է նշվեն պայմանագրի հայտարարության կամ պայմանագրին վերաբերող փաստաթղթերի մեջ:

Ընտրություն

Պայմանագրի հայտարարությունից հետո պետական պատվիրատուն կստանա դիմումներ տնտեսվարող սուբյեկտներից, որոնք ցանկանում են մասնակցել գործընթացին և մրցույթին: Պետական պատվիրատուն գործընթացի ընթացքում

կընտրի այն մասնակիցներին, որոնք հետագայում կհրավիրվեն մրցույթի: Ընտրության գործընթացը բաժանվում է երկու առանձին փուլերի.

- Փուլ 1, որը վերաբերում է գործընթացից մասնակիցների ամբողջությամբ բացառմանը,
- Փուլ 2, որը վերաբերում է մնացած մասնակիցների համապատասխանության գնահատմանը և այն մասնակիցների ընտրությանը, որոնք հնարավորություն կստանան մասնակցելու գործընթացի հետագա փուլերին:

Փուլ 1 – Բացառում. Հրահանգը սահմանում է, թե ինչ հիմքերի առկայության դեպքում հետաքրքրություն ցուցաբերող մասնակիցները պետք է բացառվեն: Այս պարտադիր հիմքերը վերաբերում են ծանր հանցագործությունների համար դատապարտված լինելուն: Հրահանգը սահմանում է նաև, թե ինչ հիմքերով մասնակիցները կարող են բացառվել: Բացառման համար ոչ պարտադիր հիմքերը կարող են լինել այն հարցերը, որոնք կապված են սոցիալական հայեցակետերի հետ: Գործնականում, հնարավորությունները բավականին սահմանափակ են:

Փուլ 2- համապատասխան մասնակիցների ընտրությունը. Հրահանգը սահմանում է ընտրության չափորոշիչների ամբողջական ցուցակ, որոնք պետական պատվիրատուն կարող է օգտագործել այն մասնակիցներին ընտրելու համար, որոնց կտրվի մրցույթին (կամ բանակցություններին) մասնակցելու հրավեր: Գոյություն ունի սահմանափակում, թե որքանով ընտրության սոցիալական չափորոշիչները կարող են կիրառվել: Հրահանգը և նախադեպային իրավունքը հաստատում են, որ.

- ընտրության չափորոշիչների ցուցակն ամբողջական է, այն չի կարող ավելացվել,
- չափորոշիչների սահմանափակ ցուցակը սահմանված է մանրամասն՝ մեկնաբանության կամ մանրելու համար քիչ հնարավորությամբ,
- Գնահատումը կարող է վերաբերել մասնակցի ունակությանը՝ իրականացնել կոնկրետ պայմանագիր, որը գնումների գործընթացի առարկան է:

Քիչ հավանական է, որ սոցիալական հայեցակետերը կարող են օգտագործվել մասնակցի “տնտեսական և ֆինանսական դրություն” հայեցակետի մեջ: Մա նշանակում է, որ դեպքերի մեծ մասում միակ ձևը, որի միջոցով սոցիալական հայեցակետերը կարող են օգտագործվել որպես մասնակիցների ընտրության հիմք, այն է, որ նրանց վերաբերեն որպես մասնակիցների “տեխնիկական իմացության և/կամ մասնագիտական ունակության” վրա ազդեցություն ունեցող:

Հայտերի գնահատումը

Երբ ընտրվել են մասնակիցները, պետական պատվիրատուն հայտերի ներկայացման առաջարկ է ներկայացնում կարճ ցուցակում ընդգրկված մասնակիցներին: Պետական պատվիրատուն գնահատում է ստացված հայտերը և շնորհում է պայմանագիրը:

Պետական պատվիրատուն պետք է գնումների ծրագրման փուլում որոշեր, թե արդյոք պայմանագիրը պետք է շնորհի հիմնվելով (1) միայն ամենացածր գնի կամ

(2) տնտեսապես ամենաշահավետ հայտի վրա: Շնորհման հիմքը պետք է նշվի պայմանագրի հայտարարության մեջ:

Հնարավոր է սոցիալական հայեցակետերը օգտագործել այն հայտերի մեջ, որոնք շնորհվում են ամենացածր գնի հիման վրա՝ համապատասխան պահանջը տեխնիկական մասնագրերի և պայմանագրի պայմանների մեջ ներառելով: Քանի որ գինը շնորհման միակ չափորոշիչն է, հնարավոր չէ ներառել սոցիալական հայեցակետերին վերաբերող չափորոշիչներ:

Երբ պետական պատվիրատուն առաջարկում է պայմանագիրը շնորհել տնտեսապես ամենաշահավետ հայտի հիման վրա, սոցիալական հայեցակետերը օգտագործելու ավելի շատ հնարավորություններ կան: Հրահանգը սահմանում է հայտերի գնահատման չափորոշիչների ոչ ամբողջական նկարագրական ցուցակը: Այս ցուցակը հատուկ հղում չի պարունակում սոցիալական հայեցակետերին, բայց պարզ է, որ պետական պատվիրատուն ունի կիրառվելիք չափորոշիչների, ներառյալ սոցիալական հայեցակետերին վերաբերող չափորոշիչների, ընտրության իրավունք: Այնուամենայնիվ, այս իրավունքը ունի որոշ սահմանափակումներ: Շնորհման բոլոր չափորոշիչները, որոնք վերաբերում են սոցիալական հայեցակետերին և օգտագործվում են տնտեսապես ամենաշահավետ հայտը գնահատելու համար, պետք է բավարարեն չորս պայմաններ.

- Շնորհման չափորոշիչները պետք է կապ ունենան պայմանագրի առարկայի հետ,
- Շնորհման չափորոշիչները պետք է հատուկ կերպով և օբյեկտիվորեն չափելի լինեն,
- Շնորհման չափորոշիչները պետք է նախապես հայտարարվեն
- Շնորհման չափորոշիչները պետք է համապատասխանեն Համայնքի իրավունքին և հավասար վերաբերմունքի, խտրականության արգելքի և թափանցիկության հիմնարար սկզբունքներին:

Պայմանագրի պայմանները

Պայմանագրի պայմանները կարող են ներառել պայմանագրի իրականացման վերաբերյալ դրույթներ, որոնք օգտագործվում են՝ մասնավորեցնելու, թե ինչպես պետք է իրականացվի պայմանագիրը:

Հրահանգը հատուկ շեշտում է, որ “պետական պատվիրատուն կարող է սահմանել հատուկ պայմաններ՝ պայմանագրի իրականացման վերաբերյալ՝ պայմանով, որ դրանք համապատասխան են Համայնքի իրավունքին և նշված են պայմանագրի հայտարարության կամ մասնագրերի մեջ: Պայմանագրի իրականացումը կարգավորող պայմանները կարող են վերաբերել, մասնավորապես, սոցիալական և բնապահպանական հայեցակետերին”:

Հետևաբար, սոցիալական հայեցակետերը կարող են ներառնվել որպես պայմանագրի պայմաններ՝ պայմանով, որ դրանք.

- վերաբերում են պայմանագրի իրականացմանը,
- հրատարակվել են պայմանագրի հայտարարության մեջ կամ պայմանագրին վերաբերող փաստաթղթերում, և

- համապատասխանում են Համայնքի իրավունքին:

Գնումների գործընթացի ընթացքում այս պայմանների օգտագործման սահմանափակումները. Պայմանագրի պայմանները չպետք է փոփոխեն տեխնիկական մասնագրերը, ընտրության չափորոշիչները կամ գնահատման չափորոշիչները. դրանք պետք է այնպիսին լինեն, որ մրցույթը հաղթող ցանկացած մասնակից կարողանա բավարարել դրանք պայմանագրի սկսման պահից: Պայմանագրի պայմանները պետք է հստակորեն սահմանվեն, որպեսզի մրցույթի յուրաքանչյուր մասնակից տեղյակ լինի պայմանագրում պարունակվող բոլոր պարտավորությունների մասին և ունակ լինի ներկայացնելու համապատասխան գնային առաջարկ:

Պայմանագրի պայմանների հետ համապատասխանության ապացույց չպետք է պահանջվի գնումների ընթացակարգի ընթացքում: Մասնակիցները պետք է ընդունեն պայմանները, որպեսզի նրանց շնորհվի պայմանագիրը:

Պայմանագրի պայմանները պետք է զգուշորեն օգտագործվեն և դրանց պետք է օժանդակեն իրենց առաջացրած ծախսերը և օգուտները:

Սոցիալական հայեցակետեր օգտագործող պայմաններով հնարավոր պայմանագրերի օրինակներ են.

- Հասարակական կենտրոնի վերականգնման համար աշխատանքների կատարման պայմանագիր՝ պայմանով, որ աշխատանքի 5%-ը կատարվում է համապատասխան աշխատանքային փորձառություն չունեցողների կողմից, որոնք մասնակցի հետ ունեն ուսման կամ վերապատրաստման պայմանագիր:
- Ծեր մարդկանց խնամքի ցերեկային կենտրոնում սննդի մատակարարման պայմանագիր՝ պայմանով, որ ամբողջ աշխատակազմը պետք է վերապատրաստվի ծերերի և հաշմանդամների համար զանազան սննդակարգերի պահանջների հետ կապված:

Պայմանագրի իրականացման նկատմամբ հսկողությունը

Պայմանագրի իրականացման նկատմամբ հսկողության կարևոր մաս է կազմում դիտանցումը՝ ապահովելու, որ պայմանագիրն իրականացվում է պայմանավորված ձևով: Սոցիալական պայմանների ներմուծման համար մասնագրերի և պայմանագրի պայմանների հստակ սահմանումը ձևական է, եթե պետական պատվիրատուն չի ստուգում, թե արդյոք այս պահանջները կատարվում են կամ չի ձեռնարկում միջոցներ, եթե պարզում է, որ պահանջները չեն կատարվում:

Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ

Ընդհանուր առմամբ կիրառվում են միևնույն իրավական նորմերը 2004/18/ԵՀ

Հանրային Ոլորտի Հրահանգի և 2004/17/ԵՀ Կոմունալ ծառայությունների մատուցման Հրահանգի համաձայն: Այս հրահանգներն ունեն շատ նմանատիպ և համանման դրույթներ: Արդարադատության Եվրոպական Դատարանը (ԱԵԴ) հակված է միևնույն մեկնաբանությունը կիրառել հանրային ոլորտի պետական պատվիրատուի և կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար:

Հիմնական տարբերությունները վերաբերում են մասնակիցների բացառմանը և ընտրությանը վերաբերող նորմերին, քանի որ Կոմունալ ծառայությունների մատուցման Հրահանգում դրույթներն ավելի քիչ են մանրամասնեցված և ավելի քիչ ցուցումներ են պարունակում, քան Հանրային Ոլորտի Հրահանգի դրույթները:

Ի՞նչ է նախատեսում Հրահանգը սոցիալական հայեցակետերի օգտագործման առումով: Հրահանգը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք հատկապես վերաբերում են գնումների գործընթացի մեջ սոցիալական հայեցակետերի օգտագործմանը: Սրանք էականորեն արտացոլում են Հանրային Ոլորտի Հրահանգի դրույթները և ներառում են հաշմանդամների աշխատավայրերին և հաշմանդամների աշխատանքային ծրագրերին վերաբերող դրույթներ: Ստորև նշված են մի քանի հիմնական տարբերություններ:

Ընտրություն-Փուլ 1. Բացառում. Սա հիմնական ոլորտներից է, երբ կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների նկատմամբ կիրառվող Հրահանգի իրավական նորմերը տարբեր են Հանրային Ոլորտի Հրահանգի նորմերից: Տարբերություն կա նաև կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև, որոնք համարվում են հանրային ոլորտի պետական պատվիրատու, և նրանց միջև, որոնք չեն համարվում հանրային ոլորտի պետական պատվիրատու:

Պարտադիր բացառման հիմքերը. կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը, որը պետական պատվիրատու է, պետք է կիրառի այն նորմերը, որոնք պահանջում են պարտադիր բացառում այն մասնակիցների համար, որոնք մեղավոր են ճանաչվել ծանր հանցագործության մեջ: Պետական պատվիրատու չհանդիսացող կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները պարտավոր չեն կիրառել այդ նորմերը:

Բացառման հայեցողական հիմքերը. Կոմունալ ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունները կարող են, սակայն պարտավոր չեն բացառման հայեցողական հիմքերով պայմանավորված բացառել մասնակիցներին: Բացառման հայեցողական հիմքերը ներառում են բացառման հիմքեր, հիմնված մասնագիտական պարտականությունների մեջ թերացումների կամ ծանր խախտումների վրա, որոնք կարող են օգտագործվել սոցիալական հայեցակետերի հետ կապված:

Ընտրություն-Փուլ 2. Մասնակիցների ընտրությունը. Կոմունալ ծառայությունների մատուցման Հրահանգը չի սահմանում չափորոշիչների ամբողջական ցուցակ, որոնք պետք է օգտագործվեն մասնակիցների ընտրության համար: Այն տարբեր է 2004/18/ԵՀ Հրահանգից, որով սահմանված են ինչպես չափորոշիչների մանրամասն և ամբողջական ցուցակը, այնպես էլ

այն տեղեկատվությունը, որը կարող է պահանջվել:

Մասնակիցներին ընտրելիս կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններից պահանջվում է օգտագործել “օբյեկտիվ կանոններ և չափորոշիչներ”: Այս օբյեկտիվ նորմերը և չափորոշիչները պետք է հասանելի լինեն շահագրգիռ տնտեսվարող սուբյեկտներին: Հետևաբար, կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններն ավելի մեծ ճկունություն ունեն գնումների այս փուլում սոցիալական հայեցակետերը օգտագործելու համար՝ պայմանով, որ չափորոշիչները կապված են պայմանագրի առարկայի հետ, վերաբերում են մասնակցի ունակությանը՝ իրականացնել կոնկրետ պայմանագիր և չեն խախտում Պայմանագրի սկզբունքները:

Ընտրության նույն սկզբունքները կիրառվում են որակավորման համակարգին մասնակցելու համար մասնակիցների ընտրությանը:

Հայտերի գնահատումը

Երբ մասնակիցներն ընտրվել են, կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը կարճ ցուցակում գրանցված մասնակիցներին հրավիրում է ներկայացնելու հայտեր: Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը գնահատում է ստացված հայտերը և շնորհում է պայմանագիրը:

Պետական պատվիրատուն պետք է գնումների ծրագրման փուլում որոշեր, թե արդյոք պետք է շնորհի պայմանագիրը հիմնվելով (1) միայն ամենացածր գնի կամ (2) տնտեսապես ամենաշահավետ հայտի վրա: Շնորհման հիմքը պետք է նշվի պայմանագրի հայտարարության մեջ:

Հնարավոր է սոցիալական հայեցակետերը օգտագործել այն հայտերի մեջ, որոնք շնորհվում են ամենացածր գնի հիման վրա՝ համապատասխան պահանջը տեխնիկական մասնագրերի և պայմանագրի պայմանների մեջ ներառելով:

Երբ կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունը առաջարկում է պայմանագիրը շնորհել տնտեսապես ամենաշահավետ հայտի հիման վրա, սոցիալական հայեցակետերը օգտագործելու և դրանք շնորհման չափորոշիչների մեջ ներառելու ավելի շատ հնարավորություններ կան:

Երբ օգտագործվում է նախաորակավորման համակարգը, ապա միևնույն սկզբունքները կիրառվում են հայտերի գնահատման չափորոշիչների օգտագործման ժամանակ:

Նույն սկզբունքները կիրառվում են կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից հայտերի գնահատման համար շնորհման չափորոշիչների սահմանման նկատմամբ:

Հետագա ընթացանություն.

[SIGMA Public Procurement Training Manual](#)